

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Նարինե Բազրատի Պետրոսյան

**ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և
կառավարում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսություն**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
Թաթուլ Մելսիկի Մկրտչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր
Միքայել Սերգեյի Մելքումյան

Տնտեսագիտության թեկնածու
Վահրամ Սամվելի Զանվելյան

Առաջատար կազմակերպություն՝

**Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի փետրվարի 10-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունվարի 9-ին:

**014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր՝**



S.Ս. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Կառուցվածքային բարեփոխումների գաղափարն ու վերջինիս հետ կապված հիմնախնդիրների համընդգրկուն շրջանակը գիտական շրջանառության մեջ է դրվել շուրջ 4 տասնամյակ առաջ ու դարձել տնտեսական քաղաքականություն մշակողների և իրականացնողների գաղափարական գլխավոր ուղենիշներից մեկը: Ընդ որում, յուրաքանչյուր նոր տասնամյակ ոչ միայն չի հնացնում այս գաղափարը, այլև ուսումնասիրությունների նոր ուղղություններ ու թիրախներ է ավելացնում առանց այն էլ համընդգրկուն այս գաղափարի հետազոտական ուղղություններին: Հատկապես զարգացող շուկայական տնտեսություն ունեցող և շարունակական բարեփոխումների կենսացիկլում գտնվող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանի Հանրապետությունն է, տնտեսական քաղաքականության տարբեր միջոցառումների համախմբի իրականացմամբ կառուցվածքային բարեփոխումների ապահովումը առավել քան կարևոր է հատկապես այն առումով, որ մերօրյա իրականության մեջ ռեսուրսահեն տնտեսական աճն այլևս ի զորու չէ ապահովելու տնտեսական զարգացման բավարար տեմպեր, ուստի կառուցվածքային բարեփոխումները աստիճանաբար ընկալվում են որպես տնտեսական աճի և զարգացման նոր հիմնարարներ: Բացի այդ, ստեղծված տնտեսական արդյունքին զուգահեռ հասարակության բարեկեցության ոչ նույնաչափ փոփոխությունը, սոցիալական, տնտեսական և այլ բնույթի հիմնախնդիրների՝ տարիներ շարունակ արդիական մնալու և չլուծված լինելու հանգամանքը հուշում են, որ իրականացված կառուցվածքային բարեփոխումները իրենց բնույթով չեն նպաստել կամ մասամբ են նպաստել վերոնշյալ խնդիրների լուծմանը, իսկ ապահովված տնտեսական արդյունքը գերազանցապես եղել է իրավիճակային մակրոտնտեսական քաղաքականության և արտաքին գործոնների ազդեցության հետևանք՝ կառուցվածքային բարեփոխումների կենսագործման իրական նպատակները թողնելով միայն թղթի վրա:

Ակնհայտ է, որ դեռևս 1990-ական թվականներից մեկնարկած և մինչ օրս շարունակվող կառուցվածքային բարեփոխումները շարունակում են գերազանցապես ուղղվել հիմնախնդիրների նույն համախմբի լուծմանը՝ արտացոլելով վերջիններիս ոչ բավարար արդյունավետ լինելու հանգամանքը, ինչը պարտադրում է քաղաքականություն մշակողներին և իրականացնողներին վերանայել և վերաթևարել կառուցվածքային բարեփոխումների իրականացման ուղղությունները, թիրախները, նպատակներն ու գործիքակազմը՝ կառուցվածքային բարեփոխումների փաստահեն, նպատակային ու արդյունքամետ կենսագործման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության, որակական բնույթ ունեցող ցուցանիշների քանակական գնահատման մեթոդաբանության

մշակման, այդ ոլորտում առկա հիմնական կապերի ու ազդեցությունների բնույթի բացահայտման, ինչպես նաև դրանց հետ կապված արդյունավետ գիտագործնական լուծումներ և կառուցվածքային բարեփոխումների իրականացմանն ուղղված քաղաքականության բարելավման առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ: Թեմայի արդիականությունը բխում է նաև դրան առնչվող ինչպես արդիական տեսամեթոդական, այնպես էլ գիտագործնական մշակումների իրականացման հրատապությամբ և անհրաժեշտությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական **նպատակն** է Հայաստանի Հանրապետությունում իրականացված կառուցվածքային բարեփոխումների բնույթի ու դրա մակրոտնտեսական ազդեցությունն ապահովող հիմնական գործիքակազմերի, մասնավորապես, կառուցվածքային բարեփոխումների հիմնական ուղղությունների, ազդեցության մեխանիզմների ուսումնասիրմամբ առկա հիմնախնդիրների բացահայտումը և իրականացվող կառուցվածքային բարեփոխումների գործիքակազմի ու մեխանիզմների բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակումը: Հետազոտության շրջանակներում առաջադրվել և լուծվել են հետևյալ **խնդիրները**.

- Ուսումնասիրել կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ առկա տեսությունների և հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան, «կառուցվածքային բարեփոխում» և «կառուցվածքային փոփոխություն» եզրույթների շուրջ ձևավորված տարակարծությունները, հետազոտել կառուցվածքային բարեփոխումների և մակրոտնտեսական ցուցանիշների վրա վերջինիս գործիքներով միջամտության տեսամեթոդաբանական մոտեցումները:

- Ուսումնասիրել և վերլուծել կառուցվածքային բարեփոխումների ընթացիկ վիճակը Հայաստանի Հանրապետությունում և մի շարք այլ երկրներում և տարածաշրջաններում՝ միջազգայնորեն հայտնի ինդեքսների հիման վրա:

- Հետազոտության շրջանակներում գնահատել Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ճեղքը՝ բարեփոխումների արդյունավետ համախմբի ընտրության և թիրախայնության բարձրացման համատեքստում:

- Կառուցվածքային բարեփոխումների քանակականացման և չափելի դաշտ բերելու նպատակով ձևավորել, հաշվարկել, վերլուծել և գնահատել Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը, ապա նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը՝ առաջնորդվելով բարեփոխումների հիմնական ուղղություններով:

- Կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության գնահատման նպատակով վերլուծել և գնահատել ըստ տնտեսության հիմնական հատվածների (իրական, ֆինանսական, հարկաբյուջետային, աշխատանքի շուկա)

կառուցվածքային բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության համատեքստում, առաձնացնել դրանց քանակական պարամետրերը և որակական կողմերը:

- Հետազոտել, գնահատել և վերլուծել հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները մակրոտնտեսական հիմնական փոփոխականների և տնտեսության առանձին հատվածների վրա (իրական, հարկաբյուջետային, դրամավարկային), բացահայտել և պարզաբանել, թե ըստ կառուցվածքային բարեփոխումների ուղղությունների որ համադրությունն է ապահովում մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքման համեմատաբար բարձր մակարդակը:

- Ուսումնասիրել «կառուցվածքային բարեփոխումների ծուղակի» հիմնախնդիրը և վերջինիս դրսևորումները՝ կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցությունների և վերջինիս արդյունավետության դիտանկյունից:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա՝ իրականացվող կառուցվածքային բարեփոխումների ազդեցության գնահատումն ու այդ ազդեցությունը պայմանավորող գործոնների և պայմանների համախմբն է: Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում իրականացված կառուցվածքային բարեփոխումներն են:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Սույն հետազոտության շրջանակներում որպես հիմնական մեթոդներ կիրառվել են համեմատական ուսումնասիրության և համադրման, համակարգային վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, պատմական և տրամաբանական մեթոդաբանական մոտեցումները, վիճակագրական, քանակական և որակական, մաթեմատիկական հետազոտության տարբեր գործիքներն ու գործիքակազմերը: Հետազոտության մեջ կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունների գնահատման նպատակով օգտագործվել են էկոնոմետրիկ մոդելավորման ու վերլուծության համապատասխան գործիքներ և մեթոդներ: Մասնավորապես, տվյալների մշակման և հետազոտության համար կիրառվել են ռեգրեսիոն վերլուծության, պանելային, կառուցվածքային վեկտորական-ավտոռեգրեսիոն (SVAR) և այլ տիպի մոդելներ:

Հետազոտության համար որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել ՀՀ Վիճակագրական կոմիտեի և այլ պետական գերատեսչությունների տվյալների բազաները, միջազգային կազմակերպությունների տվյալների շտեմարանները, հայաստանյան և միջազգային տարբեր ընկերությունների վերաբերյալ հաշվետվությունները, տվյալ թեմայով տարբեր հետազոտողների հրապարակումները, ուսումնասիրությունները և վերլուծությունները:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:

Կատարված հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթները հանգում են հետևյալին.

- Մշակվել է կառուցվածքային բարեփոխումների ճեղքի գնահատման մոդել, որը հնարավորություն է ընձեռում սիմուլացիոն սցենարների միջոցով բացահայտել տնտեսության այն ոլորտները, կամ քաղաքականության ուղղությունները, որոնցում առկա է բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն՝ եկամտի թիրախային մակարդակն ապահովելու համար:

- Հայաստանի Հանրապետության համար մշակվել են կառուցվածքային բարեփոխումների և առանձին հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսներ, որոնք հնարավորություն են ընձեռում վերլուծելու և գնահատելու բարեփոխումների ինտենսիվությունը՝ հիմնվելով դրանց մակրոտնտեսական նշանակության և իրականացման աստիճանի վրա:

- Կառուցվածքային վեկտորական-ավտոռեգրեսիոն մոդելավորմամբ (SVAR) ինչպես հատվածային (իրական, ֆինանսական, հարկաբյուջետային, աշխատանքի շուկա), այնպես էլ համակցված մոդելներով գնահատվել են կառուցվածքային բարեփոխումների շուկի նկատմամբ ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների արձագանքի բնույթը, ուղղությունը, չափերն ու տևողությունը, ըստ որի՝ կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունը մակրոտնտեսական փոփոխականների վրա ավելի մեծ է դրանց իրականացման առաջին փուլում, իսկ միջնաժամկետում և երկարաժամկետում ազդեցությունը դրսևորում է մարման միտում:

- Հիմնավորվել է, որ Հայաստանում իրականացվող կառուցվածքային բարեփոխումների շարքում հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների մասնաբաժինը ամենամեծն է, ուստի կառուցվածքային վեկտորական-ավտոռեգրեսիոն մոդելավորմամբ (SVAR) հատվածային (իրական, դրամավարկային, հարկաբյուջետային) և համակցված մոդելներով գնահատվել է հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների շուկի նկատմամբ ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքի բնույթը, ուղղությունն ու չափերը: Ըստ այդմ՝ այդ ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա երկարաժամկետում նվազող է: Ընդ որում՝ գնահատումները վկայում են, որ թեև բարեփոխումների քանակի նշանակալիությանը, դրանց ազդեցությունը դեռևս շարունակում է փոքր մնալ ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Ատենախոսության արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, որակական և քանակական վերլուծությունների արդյունքները, արված առաջարկությունները և եզրակացությունները կարող են օգտագործվել ՀՀ պետական տնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների, այդ թվում՝ մակրոտնտեսական քաղաքականության

պլանավորման, բյուջետային համակարգի զարգացման գերակայությունների որոշման և այդ ոլորտում անհրաժեշտ իրավական ու օրենսդրական փոփոխությունների իրականացման և այլ խնդիրների լուծման համար:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացների լավարկման և արդյունավետության բարձրացման աշխատանքներում: Արդյունքների որոշ մասը կարող է օգտագործվել Մակրոտնտեսագիտության դասընթացներ ներառող կրթական ծրագրերի մշակման և դասավանդման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության գիտական արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի նիստերի ընթացքում, ինչպես նաև զեկուցվել են մի շարք միջազգային գիտաժողովներում և աշխատաժողովներում: Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացվել են ՀՀ Ֆինանսների նախարարություն, քննարկվել նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչությունում և դրանց մի մասը դիտարկվելու են օրենսդրական և նորամատիվային փաստաթղթերի նախագծերի մշակման ու ոլորտին վերաբերող որոշումների ընդունման ընթացքում:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթները ամփոփված են հրապարակված 7 գիտական հոդվածներում, որոնցից 4-ը ներառված են SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 187 էջ՝ առանց հավելվածների: Ատենախոսությունը պարունակում է 31 գծապատկեր, 8 աղյուսակ, 161 անուն գրականության ցանկ և 13 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ ««Կառուցվածքային բարեփոխումներ» հասկացությունը և դրա ուսումնասիրության տեսամեթոդաբանական ասպեկտները» գլխում ուսումնասիրվել են կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ տեսությունների և հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան, «կառուցվածքային բարեփոխում» և «կառուցվածքային փոփոխություն»

եզրույթների շուրջ ձևավորված տարակարծությունները, քննարկվել են կառուցվածքային բարեփոխումների և մակրոտնտեսական ցուցանիշների վրա վերջինիս գործիքներով միջամտության տեսամեթոդաբանական մոտեցումները:

Ամփոփելով և համադրելով կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներն ու ձևակերպումները, հեղինակի կողմից տրվել է կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ արդիական ու բովանդակային տեսանկյունից ամբողջական հետևյալ սահմանումը. «*կառուցվածքային բարեփոխումները տնտեսության ինստիտուցիոնալ, կարգավորող և տեխնոլոգիական հիմքերի երկարաժամկետ և վստահության վրա հիմնված վերափոխումներն են, որոնք նախատեսված են գործող խթանները, տնտեսական գործունեությունը կարգավորող հիմնական կառուցվածքներն ու մեխանիզմները վերածնելու, տնտեսության ադապտացման կարողությունները կատարելագործելու և բաշխման արդարացիությունն ապահովելու համար՝ խթանելով տնտեսական արդյունավետությունը, դիմակայունությունը և ներառական զարգացումը երկարաժամկետ հեռանկարում*»:

Ատենախոսության երկրորդ՝ «**Մակրոտնտեսական ցուցանիշների վրա կառուցվածքային բարեփոխումների ազդեցությունների վերլուծությունը և գնահատումը Հայաստանի Հանրապետությունում**» գլխում հեղինակը **գնահատել է Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ճեղքը՝** բարեփոխումների արդյունավետ համախմբի ընտրության և թիրախայնության բարձրացման համատեքստում: Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս փոփոխականների ընտրված համախմբի հիման վրա գնահատել, թե տնտեսության ո՞ր հատվածում, ոլորտում կամ ուղղություններում է առկա կառուցվածքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն՝ որոշակի ժամանակահատվածում եկամտի թիրախային մակարդակն ապահովելու համար:

Կառուցվածքային բարեփոխումների ճեղքի գնահատման նպատակով առաջին տարբերակում ռեգրեսիոն վերլուծության նպատակով դիտարկվել են Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող զեկույցի Գլոբալ մրցունակության ինդեքսի, ապա նաև ՎՋԵԲ անցումային զեկույցի տվյալները՝ պանելային-ռեգրեսիոն վերլուծության միջոցով գնահատման ամբողջականությունն ու արդիականությունն ապահովելու նպատակով:

Եկամուտներով ճշգրտված կառուցվածքային բարեփոխումների ճեղքը հաշվարկելու համար հաշվի է առնվել նաև քաղաքական իրավունքների (ձայնի ազատություն) և տարածաշրջանային պատկանելության հարցը (այդ նպատակով մոդելում ներդրվել են կեղծ փոփոխականներ, որոնք հնարավորություն են տալիս մոդելում տարբերակել երկրներն ըստ տարածաշրջանային պատկանելության): Կառուցվածքային բարեփոխումների՝ այս ցուցանիշը հաշվարկելու համար վերը

նշված ինդեքսներից յուրաքանչյուրի համար դիտարկվել է յուրաքանչյուր հենասյան ռեգրեսիան երկրների վերոնշյալ բնութագրերի հիման վրա:

$$Ln_{score}^{(pillar)i} = const + b_1 * ln_{GDPpercap} + b_2 * ln_{polrights} ... + b_n * dummy + \varepsilon \quad (1)$$

Որտեղ՝

$Ln_{score}^{(pillar)i}$ -ն i -րդ հենասյան լոգարիթմական արժեքն է,

$const$ -ը մոդելի ազատ անդամն է,

$ln_{GDPpercap}$ -ը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի լոգարիթմական արժեքն է,

$ln_{polrights}$ -ը քաղաքական իրավունքների (ծայնի ազատության) ինդեքսի լոգարիթմական արժեքն է,

$dummy$ -ն կեղծ փոփոխականների համախումբն է՝ ըստ մոդելում տարբերակված տարածաշրջանների,

$b_1, b_2, ..., b_n$ -ը կախյալ փոփոխականների գործակիցներն են,

ε -ը մոդելի սխալն է:

Հիմնվելով մոդելի արդյունքների վրա՝ հաշվարկվել է յուրաքանչյուր հենասյան ճեղքը՝ որպես ռեգրեսիայի մնացորդ՝ ըստ հետևյալ բանաձևի.

$$Gap^{(pillar)i} = Ln_{score}^{(pillar)i} - const - b_1 * ln_{GDPpercap} - b_2 * ln_{polrights} ... - b_n * dummy \quad (2)$$

Որտեղ՝

$Gap^{(pillar)i}$ -ն i -րդ հենասյան կառուցվածքային բարեփոխումների ճեղքն է,

$Ln_{score}^{(pillar)i}$ -ն i -րդ հենասյան լոգարիթմական արժեքն է,

$const$ -ը մոդելի ազատ անդամն է,

$ln_{GDPpercap}$ -ը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի լոգարիթմական արժեքն է,

$ln_{polrights}$ -ը քաղաքական իրավունքների (ծայնի ազատության) ինդեքսի լոգարիթմական արժեքն է,



$dummy$ -ն կեղծ փոփոխականների համախումբն է՝ ըստ մոդելում տարբերակված տարածաշրջանների,

$b_1, b_2, ..., b_n$ -ը կախյալ փոփոխականների գործակիցներն են,

ε -ը մոդելի սխալն է:

Երկրների միջև և երկրի ներսում ցուցիչների միջև ճեղքերի համադրելիությունը գնահատելու համար վերը հաշվարկված ճեղքը բաժանվել է վերջինիս ստանդարտ շեղման վրա: Նույն մոտեցումը կիրառվել է նաև ՎՋԵԲ-ի անցումային զեկույցի հիման վրա կառուցվածքային բարեփոխումների ճեղքի գնահատման նպատակով¹:

¹ Ներկայացված մեթոդաբանությամբ հաշվարկված ճեղքը հնարավորություն է տալիս վերլուծել, թե որ ոլորտներում է դիտարկված երկրի աճելի լավ հանդես եկել և կենսագործել բարեփոխումների անհրաժեշտ համախումբը, որ



Գծապատկեր 1. Կառուցվածքային բարեփոխումների ճեղքը ՀՀ-ում՝ ըստ Գլոբալ մրցունակության ինդեքսի²

Գծապատկեր 2. Կառուցվածքային բարեփոխումների ճեղքը ՀՀ-ում՝ ըստ Գլոբալ մրցունակության ինդեքսի /միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների եկամտի հիման վրա/³


Այս տեսանկյունից հեղինակի գնահատումները վկայում են, որ Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների ճեղքը համեմատաբար հավասարակշռված է թվում մեկ շնչի հաշվով եկամտի հայաստանյան մակարդակի պայմաններում, ավելի բարձր չափանիշները կտրուկ մեծացնում են վերջինիս կառուցվածքային թույլ կողմերը: Վրաստանի եկամտի պայմաններում Հայաստանի հմտությունների, ՏՀՏ ներդրման, ենթակառուցվածքների և մակրոտնտեսական կայունության ճեղքերը զգալիորեն մեծանում են: Ադրբեջանի եկամտի պայմաններում ճեղքերը համեմատաբար փոքր են, սակայն արտացոլում են այդ երկրի եկամտին համահունչ եկամուտ ապահովելու պարագայում սպասվող լրացուցիչ բարեփոխումների անհրաժեշտությունը: Միջինից բարձր

որոշումներում են առկա կառուցվածքային բարեփոխումների ճեղքեր և համեմատել ստացված արդյունքներն այլ երկրների և երկրների խմբերի հետ: Համեմատության հիմքում դրվում է այն տրամաբանությունը, թե Նշված հենայուններից որոնցում Հայաստանը պետք է իրականացնի բարեփոխումներ կամ ավարտին հասցնի արդեն իսկ իրագործվողները՝ համեմատվող երկրի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ին համահունչ ՀՆԱ ունենալու համար: Նշենք, որ բացասական ճեղքերը ցույց են տալիս, որ տվյալ երկրին ավելի վատ արդյունքներ է ցուցաբերել, և դիտարկվող հենայունների տեսանկյունից ունի բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն՝ եկամտի թիրախային մակարդակն ապահովելու համար, քան համեմատվող երկիրը կամ երկրների խումբը, մինչդեռ դրական ճեղքը՝ հակառակը:

²Աղբյուրը՝ Global Competitiveness Report, World Bank, https://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf, և հեղինակի գնահատումներ

³Աղբյուրը՝ Schwab K., Zahidi S., (2020). The Global Competitiveness Report, How Countries are Performing on the Road to Recovery, World Economic Forum, https://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2020.pdf և Հեղինակի հաշվարկներ

եկամուտ ունեցող երկրների խմբի չափանիշներով գրեթե բոլոր դրական ճեղքերը վերանում են, և Հայաստանը համակարգված կերպով ցածր արդյունքներ է գրանցում գրեթե բոլոր հենաայուններով: Սա ենթադրում է, որ եկամուտների կոնվերգենցիան՝ առանց զուգահեռ կառուցվածքային բարեփոխումների, կբացահայտի Հայաստանի տնտեսության առկա թույլ կողմերը և բարեփոխումների կարիքները կրթոճնի ավելի հրատապ:



Գծապատկեր 3. Կառուցվածքային բարեփոխումների ճեղքը ՀՀ-ում՝ ըստ ՎՋԵԲ-ի անցումային ցուցանիշների (անցումային զեկույց) /Վրաստանի և Ադրբեջանի եկամտի հիման վրա/⁴

Գծապատկեր 4. Կառուցվածքային բարեփոխումների ճեղքը ՀՀ-ում՝ ըստ ՎՋԵԲ-ի անցումային ցուցանիշների (անցումային զեկույց) /միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների եկամտի հիման վրա/⁵

Գնահատումները վկայում են, որ Հայաստանի կառուցվածքային բարեփոխումների գունապնակը բնութագրվում է մի պատկերով, երբ շուկաները ավելի մրցունակ են, իսկ ֆինանսական համակարգը՝ համեմատաբար ավելի դիմակայուն, քան ակնկալվում էր, սակայն կառավարումը և վերջինիս որակը մնում է քրոնիկ թույլ, ենթակառուցվածքներն ու հմտությունները թերզարգացած,

⁴ Աղբյուրը՝ Schwab K., Zahidi S., (2020). The Global Competitiveness Report, How Countries are Performing on the Road to Recovery, World Economic Forum, https://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2020.pdf և Հնդիակի հաշվարկներ

⁵ European Bank for Reconstruction and Development (EBRD). (2023). TRANSITION REPORT 2023-24 TRANSITIONS BIG AND SMALL, ISBN: 978-1-898802-55-6, <https://www.ebrd.com/home/news-and-events/publications/economics/transition-reports/transition-report-2023-24.html#>
Federal Reserve Bank of St. Louis, Constant GDP per capita for Upper Middle Income Countries, <https://fred.stlouisfed.org/series/NYGDPPCAPKDUMC>

իսկ կանաչ անցումը՝ թերկենսագործված, մինչդեռ տնտեսության ինտեգրումը կառուցվածքային առումով սահմանափակված է: Վրաստանի, Ադրբեջանի և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների եկամուտների հիման վրա կատարված գնահատումները փաստում են, որ ավելի բարձր եկամուտների ապահովման Հայաստանյան թիրախի կենսագործումն ուղեկցվելու է կառավարման, ենթակառուցվածքների և կայունության առկա թերությունների սրմամբ, եթե վճռական բարեփոխումներ չձեռնարկվեն՝ ընդգծելով, որ Հայաստանի կառուցվածքային բարեփոխումների հաջորդ փուլը պետք է առաջնահերթություն տա կառավարման կամ ինստիտուցիոնալ վերափոխմանը և կանաչ անցումին՝ միաժամանակ ամրապնդելով մրցունակության և դիմակայունության ձեռքբերումները:

Բարեփոխումների առանցքը համարվող այս գնահատումների իրականացումը սկիզբ է դնում բարեփոխումների գործընթացի երկրորդ և նույնաչափ բարդ քայլին՝ բարեփոխումների արդյունավետ համախմբի ընտրությանը, ինչն իր հերթին ենթադրում է ինչպես արդեն իսկ իրականացված բարեփոխումների, այնպես էլ բարեփոխման ենթակա թիրախային ոլորտների համապարփակ ու դետալային վերլուծություն և գնահատում:

Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ ատենախոսության սույն գլխում հեղինակը կառուցվածքային բարեփոխումների քանակականացման և չափելի դաշտ բերելու նպատակով **ձևավորել, հաշվարկել, վերլուծել և գնահատել է Հայաստանի Հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը (այսուհետ՝ ԿԲԻ)**, ապա նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ինդեքսը (այսուհետ՝ ՀԿԲԻ)՝ առաջնորդվելով բարեփոխումների առանցքային ուղղություններով, փորձագիտական գնահատման մոտեցմամբ, գլխավոր բաղադրիչների (PCA) վերլուծության մեթոդով՝ հիմքում ընդունելով Արժույթի միջազգային հիմնադրամի Ֆինանսավորման միջոցառումների մոնիթորինգի (MONA) տվյալների շտեմարանը և կիրառելով միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած կառուցվածքային բարեփոխումների երկուական կողավորման մեխանիզմը:

Հայաստանում իրականացված կառուցվածքային բարեփոխումների ոլորտային ինտենսիվությունը գնահատելու, դրանց տնտեսական նշանակությունը և վերջիններիս նկատմամբ ԿԲԻ-ի ճկունությունը գնահատելու նպատակով վերջիններս դասակարգվել են հինգ խոշոր խմբավորումներում կամ ըստ հինգ քաղաքականության ոլորտների՝ հարկաբյուջետային, ֆինանսական, սոցիալական, դրամավարկային և այլ (ինստիտուցիոնալ և այլ բնույթի բարեփոխումներ, որոնք չեն ներառվել նախորդող չորս խմբերում):

$$SRI_t = \lambda_1 \cdot Z_{fiscal,t} + \lambda_2 \cdot Z_{financial,t} + \lambda_3 \cdot Z_{monetary,t} + \lambda_4 \cdot Z_{social,t} + \lambda_5 \cdot Z_{other,t}, \quad (3)$$

Որտեղ՝

SRI_t -ն ժամանակի t պահին կառուցվածքային բարեփոխումների համակցված (կոմպոզիտային) ինդեքսն է,

$Z_{fiscal,t}$ - ժամանակի t պահին հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,


$Z_{financial,t}$ - ժամանակի t պահին ֆինասական կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,

$Z_{monetary,t}$ - ժամանակի t պահին դրամավարկային կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,

$Z_{social,t}$ - ժամանակի t պահին սոցիալական կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,

$Z_{other,t}$ - ժամանակի t պահին այլ կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,

$\lambda_1, \lambda_2, \lambda_3, \lambda_4, \lambda_5$ - ոլորտային կառուցվածքային բարեփոխումների գործակիցներն են՝ գնահատված Գլխավոր բաղադրիչների վերլուծության մեթոդի հիման վրա:



Գծապատկեր 5. Հայաստանի կառուցվածքային բարեփոխումների համակցված ինդեքսի շարժընթացը և բաղադրիչների նպաստումները 1995-2024 թվականներին^{6,7}

ԿԲԻ-ի վերլուծությունը բացահայտում է Հայաստանի բարեփոխումների օրինաչափությունների վրա ազդող գործոնների երեք հիմնական համախումբ՝ քաղաքական բիզնես ցիկլեր, ճգնաժամային դրվագներ և հետհեղափոխական

⁶ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ և ԱՄՀ-ի MONA տվյալների շտեմարան, International Monetary Fund. (2025), Monitoring of Fund Arrangements (MONA). Archived MONA Data (1993-2003), <https://www.imf.org/external/np/pdr/mona/HistoricalData.aspx>

International Monetary Fund. (2025), Monitoring of Fund Arrangements (MONA), Arrangements, 2002-current Full dataset, <https://www.imf.org/external/np/pdr/mona/Arrangements.aspx>

⁷ ԿԲԻ-ի բաղադրիչների նպաստումների բացասական արժեքները արտացոլում են այն տարիները, երբ տվյալ ոլորտում բարեփոխումների ինտենսիվությունը նվազել է երկարաժամկետ ստանդարտացված միջինից: Նա չի վկայում տվյալ տարվա ընթացքում բարեփոխումների «հետընթացի» մասին, այլ տվյալ ոլորտում կառուցվածքային բարեփոխումների հարաբերականորեն պակաս լինելու մասին:

գործընթացներ: Հայաստանյան կառուցվածքային բարեփոխումների շղթան աչքի է ընկնում բարձր կենտրոնացվածության մակարդակով՝ ի դեմս հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների: Ավելին, ԿԲԻ-ում ոլորտային նպաստումների ուսումնասիրությունը բացահայտում է հստակ ասիմետրիաներ: Ֆինանսական և հարկաբյուջետային բարեփոխումները եղել են ընդհանուր բարեփոխումների թափի հիմնական շարժիչ ուժերը ամբողջ ժամանակահատվածում, մինչդեռ սոցիալական և դրամավարկային բարեփոխումները խաղացել են ավելի սահմանափակ դեր: Հարակից այլ, այդ թվում՝ կառավարման հետ կապված բարեփոխումները, որոնք դասակարգվում են որպես «այլ», ցուցաբերում են դրվագային ազդեցություն: Կառուցվածքային բարեփոխումների նման անհամաչափ բաշխումը ազդակ է կառավարող շրջանակների համար՝ բարեփոխումների թիրախայնությունը վերանայելու և առաջնահերթությունների ցանկը թարմացնելու տեսանկյունից:

Հաշվի առնելով հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների բարձր ինտենսիվությունը՝ հաջորդիվ **հեղինակը կառուցել է ՀԿԲԻ-ն՝** կառուցվածքային բարեփոխումների այս համախմբի ինտենսիվությունը, կառուցվածքը, մակրոտնտեսական ազդեցությունը գնահատելու նպատակով⁸: Ատենախոսության այս հատվածի մեթոդաբանության հիմնական բաղադրիչը հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների դասակարգումն է երեք կատեգորիաներում՝ **եկամտային, ծախսային և ինստիտուցիոնալ կառուցվածքային բարեփոխումներ**: Միևնույն ժամանակ, գնահատման տարբերակված մոտեցում կիրառելով և հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ազդեցության համեմատաբար երկարաժամկետ բնույթը հաշվի առնելով՝ հեղինակը կիրառել է հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ազդեցության նվազման գործակից՝ բարեփոխման ազդեցությունը դրա իրականացման հորիզոնի ընթացքում բաշխելու համար, այդպիսով խուսափելով բարեփոխումների այս համախմբի պարագայում հնարավոր կտրուկ տեղաշարժերից: Գործակիցը կիրառվել է յուրաքանչյուր ենթաինդեքսի համար, հետևյալ ընդհանուր տրամաբանությամբ:

$$Adjusted\ Reform\ Index_t = R_t + \delta \cdot Adjusted\ Reform\ Index_{t-1}, \quad (4)$$

Որտեղ՝

R_t – հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների համապատասխան ենթաինդեքսն է t տարում,

$\delta = 0.8$, հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների համապատասխան ենթաինդեքսի ազդեցության նվազման գործակիցն է,

⁸ Ստվել մանրամասն տե՛ս Mkrtchyan, T. M., & Petrosyan, N. (2025). Measuring fiscal structural reform intensity: The case of Armenia. *Public and Municipal Finance*, 14(3), 93–104. [https://doi.org/10.21511/pmf.14\(3\).2025.07](https://doi.org/10.21511/pmf.14(3).2025.07)

Adjusted Reform Index_t - հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների համապատասխան ճշգրտված ենթահիդեքսն է:

Adjusted Reform Index_{t-1} - հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների համապատասխան ճշգրտված ենթահիդեքսի լագային արժեքն է:

Հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների շարունակականության մոդելավորման համար մենք օգտագործել ենք բարեփոխումների ազդեցության թուլացման գործոնը՝ 0.8 գործակցով: Այս մոտեցումը հիմնված է ինչպես էմպիրիկ, այնպես էլ ինստիտուցիոնալ մոտեցումների վրա: Նախ, 0.8 գործակցի ընտրությունը համապատասխանում է մոտավորապես երեք տարվա կիսատրոհման պարբերության տրամաբանությանը ($0.5^{1/3} \approx 0.8$), որը արտացոլում է հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների միջնաժամկետ ազդեցության հանգամանքը:

Հարկային բարեփոխումների, հարկաբյուջետային կանոնների և ծախսային ճշգրտումների վերաբերյալ էմպիրիկ ուսումնասիրությունները⁹ մշտապես ցույց են տալիս, որ դրանց չափերի մակրոտնտեսական ազդեցությունները ամենաուժեղն են սկզբնական տարիներին և սովորաբար նվազում են երեքից հինգ տարվա հորիզոնում: Երկրորդ, անցումային տնտեսությունների, ինչպիսին է Հայաստանը, ինստիտուցիոնալ բնութագրերը նույնպես արդարացնում են այս արժեքի ընդունումը, ընդ որում, Հայաստանում բյուջետային գործընթացին առնչվող բոլոր գնահատումներն ու կանխատեսումները սովորաբար իրականացվում են 3-5 տարվա ժամանակային հորիզոնով:

Հաջորդիվ, կառուցվածքային բարեփոխումների համակցված ինդեքսը ստանալու նպատակով, գլխավոր բաղադրիչների վերլուծության հիման վրա, որոշվել են հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների (<ԿԲ) բաղադրիչների կշիռները <ԿԲ համակցված ինդեքսի կառուցվածքում, որոնց ազդեցավորման արդյունքում այն կառուցվել է:

$$FSRI_t = \lambda_1 \cdot Z_{rev,t} + \lambda_2 \cdot Z_{exp,t} + \lambda_3 \cdot Z_{inst,t}, \quad (5)$$

Որտեղ՝

$FSRI_t$ -ն ժամանակի t պահին հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների կոմպոզիտային ինդեքսն է,

$Z_{rev,t}$ - ժամանակի t պահին եկամտային հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,

⁹ Duval, R., Furceri, D., & Milette, J. (2018). *The needle in the haystack: What drives labor and product market reforms in advanced countries?* (IMF Working Paper No. WP/18/101). International Monetary Fund.

https://doi.org/10.5089/9781484353639_001

$Z_{exp,t}$ - ժամանակի t պահին ծախսային հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,
 $Z_{inst,t}$ - ժամանակի t պահին ինստիտուցիոնալ հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների ստանդարտացված արժեքն է,
 $\lambda_1, \lambda_2, \lambda_3$ - ոլորտային կառուցվածքային բարեփոխումների կշիռներն (գործակիցները) են՝ գնահատված Գլխավոր բաղադրիչների վերլուծության մեթոդի հիման վրա:

Ինդեքսի ենթաբաղադրիչների ապագադեգավորումն ըստ նպաստումների հնարավորություն է տալիս կատարել բարեփոխումների ախտորոշում՝ վկայելով, որ բարեփոխումների ազդակը հաճախ պայմանավորված է յուրաքանչյուր ցիկլում մեկ գերիշխող հենասյունով՝ հարկային բարեփոխումները 2000-ականների սկզբին, ինստիտուցիոնալ բարեփոխումները 2008–2012 և 2019–2022 թվականներին և ծախսերի ռացիոնալացման ուղղված բարեփոխումները 2009–2011 թվականներին:

ՀԿԲԻ-ն առաջարկում է ամուր տեղեկատվական և վիճակագրական հիմք՝ բարեփոխումների ազդեցության փաստահեն մեկնաբանության և էկոնոմետրիկ մոդելավորման մեջ օգտագործման նպատակով: Այս արդյունքները քաղաքականություն մշակողներին կարող են տրամադրել գործնական պատկերացումներ հարկաբյուջետային քաղաքականության և վերջինիս առանձին ուղղություններում իրականացվող բարեփոխումների ինտենսիվության, որակի և արդյունավետության մասին: Այն մեթոդաբանական բարձրորակ շրջանակ է տրամադրում այլ անցումային տնտեսություններում հարկաբյուջետային բարեփոխումների մոնիթորինգի համար, որտեղ բարեփոխումների շարունակականությունն ու կայունությունը կարևոր են ինստիտուցիոնալ վերափոխումների և մակրոտնտեսական Ընդհանուր առմամբ, ՀԿԲԻ-ն կամուրջ է հանդիսանում բարեփոխումների չափման մեթոդաբանական բացը լրացնելու համար: Վերջինիս կիրառումը Հայաստանում ցույց է տալիս, թե ինչպես կարող է բարեփոխումների գնահատման բազմաչափ մոտեցումը կապող օղակ դառնալ տնտեսական պայմանների, քաղաքական խթանների և կառուցվածքային բարեփոխումների միջև փոխազդեցությունը մեկնաբանելու տեսանկյունից՝ առաջարկելով ինչպես ակադեմիական, այնպես էլ գործնական արժեք անցումային տնտեսություններում հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար:

Ատենախոսության երրորդ՝ «Կառուցվածքային բարեփոխումների արդյունավետության բարելավման ուղիներն ու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ըստ տնտեսության հիմնական հատվածների (իրական, ֆինանսական, հարկաբյուջետային, աշխատանքի շուկա) հետազոտվել, գնահատվել և վերլուծվել են հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ

ազդեցությունները մակրոտնտեսական հիմնական փոփոխականների և տնտեսության առանձին հատվածների վրա (իրական, հարկաբյուջետային, դրամավարկային), բացահայտվել և պարզաբանվել է, թե ըստ կառուցվածքային բարեփոխումների ուղղությունների՝ որ համադրությունն է ապահովում մակրոտնտեսական ցուցանիշների արձագանքման համեմատաբար բարձր մակարդակը:

Կառուցվածքային վեկտորական ավտոռեգրեսիոն (SVAR) մոդելի ընդհանուր տեսքը, որը կիրառվել է բոլոր հատվածային մոդելների և համակցված մոդելի պարագայում, հետևյալն է.

$$A_0 Y_t = \mu + A(L)Y_{t-1} + \varepsilon_t, (6)$$

Որտեղ՝

Y_t –ն էնդոգեն փոփոխականների վեկտորն է ժամանակի t պահին

A_0 –ն էնդոգեն փոփոխականների գործակիցների մատրիցն է,

μ –ն հաստատունների վեկտորն է,

$A(L)$ –ն էնդոգեն լագավորված փոփոխանների գործակիցների մատրիցն է,

Y_{t-1} –ն էնդոգեն լագավորված փոփոխականների վեկտորն է ժամանակի t պահին

ε_t –ը մոդելի պատահական սխալն է ժամանակի t պահին

Հիմնական մեթոդաբանական ներդրումը կառուցվածքային բարեփոխումների շուկերի մոդելավորումն է՝ օգտագործելով հեղինակի կողմից գնահատված ԿԲԻ–ն: Էմպիրիկ արդյունքները ապացուցում են, որ Հայաստանում կառուցվածքային բարեփոխումները մակրոմակարդակում երկարաժամկետում առաջացնում են ընդգծված տնտեսական օգուտներ: Ընդհանուր մակրոտնտեսական արձագանքի օրինաչափությունը բացահայտում է երկփուլ փոխանցման մեխանիզմ. սկզբնական փուլ, որը բնութագրվում է քաղաքականության ճշգրտմամբ, իրացվելիության խստացմամբ և ժամանակավոր անկայունությամբ, որին հաջորդում է կայունացման փուլ, որը բնութագրվում է ավելի բարձր արտադրությամբ, դեֆլյացիայով, հարկաբյուջետային կոնսոլիդացիայով և գործազրկության նվազմամբ:

Միևնույն ժամանակ, դիտարկված բոլոր մոդելների պարագայում մակրոտնտեսական ցուցանիշների տատանողականության դեկոմպոզիան վկայում է վերջինում բարեփոխումների համեմատաբար փոքր ներդրման մասին, ինչն արտացոլում է այն իրողությունը, որ կառուցվածքային բարեփոխումները դեռևս չեն դարձել Հայաստանի մակրոտնտեսական հիմնարարները առաջ մղող առանցքային գործոն:

Ատենախոսության սույն գլխում հեղինակը **կառուցվածքային վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելների (SVAR) միջոցով գնահատել է նաև հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցությունը:** Գնահատումներն իրականացվել են 4 տարբեր ուղղություններով՝ հարկաբյուջետային, իրական, դրամավարկային և

համակցված մակրոտնտեսական մոդելների կառուցմամբ՝ բարեփոխումների ազդեցության տարբեր փոխանցման ուղիները դիտարկելու և գնահատելու նպատակով:

Գնահատման արդյունքները հիմնավոր աջակցություն են ցուցաբերում այն առաջարկին, որ լավ հաջորդականացված, հավաստի հարկաբյուջետային բարեփոխումները գործում են որպես մակրոտնտեսական կայունացման և երկարաժամկետ զարգացման արդյունավետ գործիքներ: Ապացույցները ընդգծում են ինստիտուցիոնալ դիզայնի, քաղաքականության համակարգման և բարեփոխումների հավաստիության կարևորությունը բարեփոխումներից ստացվող արդյունքը մեծացնելու գործում: Գնահատումները վերահաստատում են, որ հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումները պարզապես քաղաքականության ճշգրտումներ չեն, այլ համակարգային մակրոտնտեսական հետևանքներով բնութագրվող փոխակերպող միջամտություններ: Իսթանբուլ եկամուտների մոբիլիզացիան, ներդրումների արդյունավետությունը և մակրոտնտեսական կայունությունը՝ նման բարեփոխումները կարող են կազմել կայուն աճի մոդելի ինստիտուցիոնալ հիմքը: Արդյունքները վերահաստատում են կարճաժամկետ հարկաբյուջետային նպատակներից դեպի երկարաժամկետ կառուցվածքային դիմակայունություն անցման կարևորությունը՝ ապացույցների վրա հիմնված բարեփոխումների նախագծման, հավաստի իրականացման և քաղաքականության համաձայնեցվածության միջոցով:

Միևնույն ժամանակ, ատենախոսության սույն գլխում հեղինակը քննարկել է **«կառուցվածքային բարեփոխումների ծուղակի» հիմնախնդիրը և վերջինիս դրսևորումները**՝ կառուցվածքային բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցությունների և վերջինիս արդյունավետության դիտանկյունից: Մակրոտնտեսական մակարդակում կառուցվածքային բարեփոխումների ծուղակը դրսևորվում է **բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցության նվազման օրինաչափությամբ**: Սույն ատենախոսության արդյունքները բացահայտում են հենց այդպիսի նվազող ազդեցություններ. բարեփոխումների ներդրումը ՀՆԱ-ի, ներդրումների և արտադրողականության տատանման մեջ մնում է 10%-ից ցածր, ինչը ենթադրում է, որ որոշակի շեմից այն կողմ լրացուցիչ բարեփոխումների ջանքերը չեն հանգեցնում ավելի բարձր մակրոտնտեսական ազդեցության: Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում, հաշվի առնելով ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունները, ուսումնասիրություններն ու վերլուծությունները հանգել ենք հետևյալ **եզրակացությունների**.

- Համադրելով կառուցվածքային բարեփոխումների շուրջ վերջին ավելի քան 40 տարում ձևավորված ընկալումների ուսումնասիրությունը, կարծում ենք, որ կառուցվածքային բարեփոխումների էությունն ու բնույթն արտացոլող ներքոբերյալ սահմանումը, որն ամփոփում է կառուցվածքային բարեփոխումների

բոլոր երեք ալիքների առանձնահատկություններն ու շեշտադրում մերօրյա իրականության առանցքային թիրախները, կարող է լինել առավել արդիական և նպատակային:

Կառուցվածքային բարեփոխումները տնտեսության ինստիտուցիոնալ, կարգավորող և տեխնոլոգիական հիմքերի երկարաժամկետ և վստահության վրա հիմնված վերափոխումներն են, որոնք նախատեսված են գործող խթանները, տնտեսական գործունեությունը կարգավորող հիմնական կառուցվածքներն ու մեխանիզմները վերաձևելու, տնտեսության ադապտացման կարողությունները կատարելագործելու և բաշխման արդարացիությունն ապահովելու համար՝ խթանելով տնտեսական արդյունավետությունը, դիմակայունությունը և ներառական զարգացումը երկարաժամկետ հեռանկարում:

- Կառուցվածքային բարեփոխումներին վերաբերող գրականության և փորձի ուսումնասիրության արդյունքում կարող ենք հստակեցնել, որ բարեփոխումների գործընթացը բաղկացած է հաջորդական քայլերի շղթայից՝ **«բարեփոխումների ուղղության ընտրություն, բարեփոխումների համախմբի ընտրություն, բարեփոխումների իրականացում, բարեփոխումների ազդեցության գնահատում»**: Այսինքն՝ կառուցվածքային բարեփոխումների իրականացումը պետք է սկսվի առաջին օղակից՝ բարեփոխումների ուղղության պարզաբանումից, որը հնարավոր է միայն բարեփոխումների բացը գնահատելու միջոցով: Հատկապես ցանկացած կառավարության սահմանափակ ռեսուրսների պայմաններում, բարեփոխումների ուղղության և բարեփոխումների համախմբի ճիշտ ընտրությունը դառնում են այս շղթայի ամենակարևոր օղակը:

- Հայաստանյան ու տարածաշրջանային համատեքստում կարող ենք նկատել, որ առնվազն առաջին և երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման տեսանկյունից Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է բավականին բարվոք դիրքեր՝ առանձին դեպքերում զիջելով միայն Վրաստանին: Բացի այդ, հաշվի առնելով, որ 2010-2020-ականները աչքի են ընկնում դիտարկված ցուցիչների հայաստանյան պատկերի համեմատաբար կայունացմամբ՝ դրական միտումով, ապա կարող ենք ենթադրել, որ հաջորդող ժամանակահատվածում որակյալ կառուցվածքային բարեփոխումների իրագործումը կարող է դառնալ կառավարման որակի բարձրացման կարևոր առանցք:

- Գլոբալ մրցունակության ինդեքսի և ՎՋԵԲ անցումային զեկույցի հասանելի տվյալների հիման վրա իրականացված գնահատումները և մի շարք երկրների եկամուտների հիման վրա մշակված սիմուլյացիոն սցենարները հնարավորություն են տալիս հատկորոշել Հայաստանում կառուցվածքային բարեփոխումների ճեղքը և բարեփոխումների իրականացման ոլորտային ուղղությունները: Հայաստանի կառուցվածքային բարեփոխումների գունապնակը բնութագրվում է մի պատկերով, երբ շուկաները ավելի մրցունակ են, իսկ

Ֆինանսական համակարգը՝ ավելի դիմացկուն, քան ակնկալվում էր, սակայն կառավարումը մնում է քրոնիկ թույլ, ենթակառուցվածքներն ու հմտությունները թերզարգացած, իսկ կանաչ անցումը՝ թերկենսագործված, մինչդեռ տնտեսության ինտեգրումը կառուցվածքային առումով սահմանափակված է: Վրաստանի, Ադրբեջանի և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների եկամուտների հիման վրա կատարված գնահատումները փաստում են, որ ավելի բարձր եկամուտների ապահովման Հայաստանյան թիրախի կենսագործումն ուղեկցվելու է կառավարման, ենթակառուցվածքների և կայունության առկա թերությունների սրմամբ, եթե վճռական բարեփոխումներ չձեռնարկվեն՝ ընդգծելով, որ Հայաստանի կառուցվածքային բարեփոխումների հաջորդ փուլը պետք է առաջնահերթություն տա կառավարման կամ ինստիտուցիոնալ վերափոխմանը և կանաչ անցմանը՝ միաժամանակ ամրապնդելով մրցունակության և դիմակայունության ձեռքբերումները:

- ԿԲԻ-ի վերլուծությունը բացահայտում է Հայաստանի բարեփոխումների օրինաչափությունների վրա ազդող գործոնների երեք հիմնական համախումբ՝ քաղաքական բիզնես ցիկլեր, ճանաժամային դրվագներ և հետհեղափոխական գործընթացներ: Հայաստանյան կառուցվածքային բարեփոխումների շղթան աչքի է ընկնում բարձր կենտրոնացվածության մակարդակով՝ ի դեմս հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների: Ավելին, ֆինանսական և հարկաբյուջետային բարեփոխումները եղել են ընդհանուր բարեփոխումների թափի հիմնական շարժիչ ուժերը ամբողջ ժամանակահատվածում, մինչդեռ սոցիալական և դրամավարկային բարեփոխումները խաղացել են ավելի սահմանափակ դեր: Հարակից այլ, այդ թվում՝ կառավարման հետ կապված բարեփոխումները, ցուցաբերում են դրվագային ազդեցություն:

- Գնահատված ՀԿԲԻ-ի արդյունքներն ապացուցում են, որ ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ ներառյալ հարկաբյուջետային կանոնների ներդրումը կամ արդիականացումը, գանձապետական համակարգի արդիականացումը և միջնաժամկետ ծախսերի շրջանակի կատարելագործումը, հանդես են գալիս որպես մակրոֆիսկալ կայունության հիմնական խարիսխներ: Ի տարբերություն դրանց՝ եկամտային և ծախսային բարեփոխումները դրսևորվել են ավելի դրվագային բնույթով՝ հաճախ պայմանավորված կարճաժամկետ հարկաբյուջետային նպատակներով, այլ ոչ թե երկարաժամկետ կառուցվածքային փոխակերպումներով: Բարեփոխումների ինտենսիվությունը ժամանակագրորեն անհավասարաչափ է՝ առավել բարձր արժեքները գրանցվել են տնտեսական շուկերի, արտաքին աջակցության և քաղաքական բարեփոխումների փաթեթների կիրառման փուլերում: Նվազման ժամանակահատվածները, սակայն, վկայում են քաղաքական բիզնես ցիկլերի ազդեցության մասին, երբ կառավարությունները խուսափում են ընտրություններից առաջ ոչ ժողովրդական բնույթ ունեցող բարեփոխումներից:

- Կառուցվածքային բարեփոխումների նկատմամբ մակրոտնտեսական փոփոխականների արձագանքի օրինաչափությունը բացահայտում է երկփուլ փոխանցման մեխանիզմ, երբ առաջին փուլն ուղեկցվում է իրականացվող քաղաքականության ճշգրտմամբ և ժամանակավոր անկայունությամբ, իսկ հաջորդ՝ կայունացման փուլը՝ ավելի բարձր արտադրությամբ, դեֆլյացիայով, հարկաբյուջետային կոնսոլիդացիայով և գործազրկության նվազմամբ: ՀՆԱ-ի, հարկաբյուջետային ցուցանիշների, գների և աշխատաշուկայի ցուցանիշների համատեղ վարքագիծը հաստատում է, որ բարեփոխումները փորձում են ամրապնդել հարկաբյուջետային կարգապահության, դրամավարկային կայունության և իրական հատվածի ցուցանիշների միջև կապը: Բոլոր ցուցանիշների արձագանքների աստիճանական անցումը դեպի հավասարակշռություն ընդգծում է, որ բարեփոխումների արդյունքները կայուն են, այլ ոչ թե անցողիկ՝ երկարաժամկետում նպաստելով մակրոտնտեսական դիմակայունության ապահովմանը: Գնահատումները հաստատում են այն տեսակետը, որ արդյունավետ իրականացված կառուցվածքային բարեփոխումները կարող են ծառայել որպես մակրոտնտեսական կայունության և ներառական աճի երկարաժամկետ խարիսխ Հայաստանում:

- Հետազոտությունը վերահաստատում է, որ հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումները պարզապես քաղաքականության ճշգրտումներ չեն, այլ համակարգային մակրոտնտեսական հետևանքներով փոխակերպող միջամտություններ: Եթանելով եկամուտների մոբիլիզացիան, ներդրումների արդյունավետությունը և մակրոտնտեսական կայունությունը՝ նման բարեփոխումները կարող են կազմել կայուն աճի մոդելի ինստիտուցիոնալ հիմքը: Արդյունքները ընդգծում են կարճաժամկետ հարկաբյուջետային նպատակներից դեպի երկարաժամկետ կառուցվածքային դիմակայունություն անցման անհրաժեշտությունը՝ ապացույցների վրա հիմնված բարեփոխումների նախագծման, իրականացման և համաձայնեցված քաղաքականության միջոցով: Արդյունքները վկայում են, որ հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումները չեն սահմանափակվում միայն վարչական բարելավումներով, այլ էական, չափելի ազդեցություն են ունենում հիմնական մակրոտնտեսական փոփոխականների վրա: Բարեփոխումների շուկերը ընդլայնում են հարկային եկամուտները և պետական ներդրումները, նվազեցնում պետական պարտքի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը, բարձրացնում արտադրողականությունը, աջակցում մասնավոր սպառմանը և չափավորում գնաճը: Համակցված կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելը հաստատում է, որ բարեփոխումները նպաստում են ՀՆԱ-ի աճին և համակարգային մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմանը՝ հիմնավորելով Հարկաբյուջետային կառուցվածքային բարեփոխումների տնտեսական արդիականությունը:

- Մակրոտնտեսական մակարդակում «կառուցվածքային բարեփոխումների ծուղակը» դրսևորվում է **բարեփոխումների մակրոտնտեսական ազդեցության նվազման օրինաչափությամբ**: Սույն ատենախոսության տարբեր հատվածներում դիտարկված մոդելների էմպիրիկ ապացույցները, թույլ իմպուլսային արձագանքները մակրոմակարդակում տատանումները բացատրելիս ենթադրում են, որ կառուցվածքային բարեփոխումներին ուղղված քաղաքականությունը դեռևս համակարգային նշանակություն ձեռք չի բերել բիզնես ցիկլի ձևավորման գործում՝ ինչը և՛ սահմանափակ կիրառման, և՛ ցածր հանրային վստահության ախտանիշ կարող է լինել: Հետևաբար, ապագա բարեփոխումների ալիքները պետք է կենտրոնանան ինստիտուցիոնալ կարողությունների խորացման վրա՝ հարկային վարչարարություն, պետական ներդրումների կառավարում, ֆինանսական վերահսկողություն և մրցակցային քաղաքականություն: Միայն այս «կառուցվածքային հանգույցները» ամրապնդելով կարող է կառուցվածքային բարեփոխումների արդյունքների փոխանցումը մակրոտնտեսական փոփոխականներին դառնալ առավել արդյունավետ:

Հիմնվելով ատենախոսության շրջանակներում ձեռքբերված արդյունքների վրա աշխատանքում կատարվել են հետևյալ առաջարկությունները.

- Կատարված վերլուծության արդյունքում մշակվել է Կառուցվածքային բարեփոխումների ճեղքի գնահատման համակարգ, որը հնարավորություն է տալիս սիմուլյացիոն սցենարների կիրառմամբ գնահատել երկրում առկա կառուցվածքային բարեփոխումների բացերը՝ նախանշված թիրախային ցուցանիշներին հասնելու համար: Ուստի առաջարկվում է կառուցվածքային բարեփոխումների ճեղքի գնահատման այս համակարգը ներդնել քաղաքականության մշակման գործընթացում (այդ թվում՝ Կառավարության ծրագիր մշակելիս)՝ ՀՆԱ-ի կամ մեկ շնչի հաշվով եկամտի աճի միջնաժամկետ կամ երկարաժամկետ թիրախային ցուցանիշներ սահմանելիս, որը հնարավորություն կտա գնահատելու, թե տնտեսության որ ոլորտներում կամ քաղաքականության որ ոլորտներում է անհրաժեշտ մշակել և իրականացնել կառուցվածքային բարեփոխումների նոր և օպտիմալ համախումբ՝ սահմանված թիրախային ցուցանիշին հասնելու համար:

- Սույն հետազոտության արդյունքում մշակված և գնահատված ԿԲԻ-ն, ինչպես նաև ՀԿԲԻ-ն, ինչպես նաև վերջիններիս հիմքում ընկած տվյալների բազան առաջարկվում է օգտագործել պետական մակարդակով մակրոտնտեսական կանխատեսումների ճշգրտությունը և որակը բարձրացնելու, ինչպես նաև կառուցվածքային բարեփոխումների՝ իրական քանակական ազդեցությունները բյուջետային փաստաթղթերում հիմնավորված և փաստահեն ներկայացնելու համար:

- Սույն հետազոտության շրջանակներում էկոնոմետրիկ գնահատումների հիման վրա մակրոտնտեսական առանցքային ցուցանիշների՝ բարեփոխումների նկատմամբ ազդակաարձագանքման վերլուծության և գնահատման մոտեցումն առաջարկվում է կիրառել Հայաստանում իրականացվող կառուցվածքային բարեփոխումների ազդեցության թիրախային ուղղությունների և ցուցանիշների ընտրության համար, ինչը հնարավորություն կտա բարձրացնել կառուցվածքային բարեփոխումների ազդեցության ինտենսիվությունը, թիրախայնությունը և հետևաբար նաև արդյունքամետ բնույթը:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում

- **Mkrtchyan, T., & Petrosyan, N. (2025).** ASSESSMENT OF STRUCTURAL REFORM GAPS: THE CASE OF ARMENIA. *Proceedings on Engineering Sciences*, 7(1), 113–118. <https://doi.org/10.24874/pes07.01a.002> (SCOPUS)
- **Mkrtchyan T. M., Petrosyan N. (2025).** Developing a Structural Reform Index for Armenia: Methodology and Economic Implications, *Public Policy and Administration*, 24(4), 612–621. <https://doi.org/10.13165/VPA-25-24-4-06> (SCOPUS)
- **Mkrtchyan, T. M., & Petrosyan, N. (2025).** MEASURING STRUCTURAL REFORM EFFECTIVENESS IN A SMALL OPEN ECONOMY: THE CASE OF ARMENIA. *Proceedings on Engineering Sciences*, 7(3), 1729–1738. <https://doi.org/10.24874/pes07.03.031> (SCOPUS)
- **Mkrtchyan, T. M., & Petrosyan, N. (2025).** Measuring fiscal structural reform intensity: The case of Armenia. *Public and Municipal Finance*, 14(3), 93–104. [https://doi.org/10.21511/pmf.14\(3\).2025.07](https://doi.org/10.21511/pmf.14(3).2025.07) (SCOPUS)
- **Petrosyan, N. (2025).** Evaluating the Macroeconomic Impact of Fiscal Structural Reforms: the Case of Armenia. *Scientific Artsakh*, № 2 (25), 338–353, DOI: 10.52063/25792652-2025.2.25-338
- **Petrosyan, N. (2024).** Evolution of Studies on the Connection between Economic Growth and Structural Reforms. *Messenger of Armenian State University of Economics*, 20–32. https://doi.org/10.52174/1829-0280_2024.2-20
- **Petrosyan, N. B. (2025).** Structural Reforms and Structural Changes. *Comparative Analysis. Регион И Мир / Region and the World*, 171–176. <https://doi.org/10.58587/18292437-2025.4-171>

ПЕТРОСЯН НАРИНЕ БАГРАТОВНА

ОЦЕНКА МАКРОЭКОНОМИЧЕСКИХ ПОСЛЕДСТВИЙ СТРУКТУРНЫХ РЕФОРМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление народным хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 10-го февраля 2026 года в 14:00 на заседании Специализированного совета по экономике 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, ул. Налбандяна 128, г. Ереван, РА.

Р Е З Ю М Е

Диссертация посвящена оценке макроэкономических последствий структурных реформ в Республике Армения.

Основная цель исследования – выявление главных проблем путем изучения характера структурных реформ, проводимых в Республике Армения, и основных инструментов, обеспечивающих их макроэкономическое воздействие, в частности, основных направлений структурных реформ, механизмов их воздействия, а также разработка предложений по совершенствованию инструментов и механизмов проводимых структурных реформ.

В рамках исследования были предложены и решены следующие задачи:

- Изучение эволюции существующих теорий и концептуальных подходов к структурным реформам, различий, сформировавшихся вокруг терминов «структурная реформа» и «структурные изменения», изучение теоретических и методологических подходов к проведению структурных реформ и макроэкономических показателей с использованием инструментов последних.
- Изучение и анализ текущего состояния структурных реформ в Республике Армения и ряде других стран и регионов на основе общепризнанных международных индексов.
- В рамках исследования оценка разрыва в структурных реформах в Республике Армения в контексте выбора эффективного комплекса реформ и повышения их адресности.
- Для количественной оценки структурных реформ и приведения их в измеримое русло разработать, рассчитать, проанализировать и оценить индекс структурных реформ в Республике Армения, а также индекс фискальных структурных реформ, руководствуясь основными направлениями реформ.
- Для оценки эффективности структурных реформ проанализировать и оценить краткосрочное и долгосрочное воздействие структурных реформ на основные сектора экономики (реальный, финансовый, фискальный, рынок труда) в контексте

эффективности структурных реформ, а также определить их количественные параметры и качественные аспекты.

- Исследовать, оценить и проанализировать краткосрочное и долгосрочное воздействие фискальных и структурных реформ на ключевые макроэкономические показатели и отдельные сектора экономики (реальный, фискальный, монетарный), определить и уточнить, какая комбинация направлений структурных реформ обеспечивает относительно высокий уровень чувствительности макроэкономических показателей.

- Изучить проблему «ловушки структурных реформ» и ее проявления с точки зрения макроэкономического воздействия структурных реформ и их эффективности.

Основные научные результаты и инновации проведенного исследования заключаются в следующем:

- Разработана модель оценки разрыва в структурных реформах, позволяющая с помощью имитационных сценариев выявлять те секторы экономики или направления политики, в которых необходимо проводить реформы для обеспечения целевого уровня дохода.

- Разработаны индексы структурных реформ и отдельные индексы фискальных и бюджетных структурных реформ для Республики Армения, позволяющие анализировать и оценивать интенсивность реформ на основе их макроэкономической значимости и степени реализации.

- Характер, направление, величина и продолжительность реакции основных макроэкономических показателей Республики Армения на шок структурных реформ были оценены с использованием как секторальных (реальные, финансовые, фискальные, рынок труда), так и комбинированных моделей, согласно которым влияние структурных реформ на макроэкономические переменные сильнее на первом этапе их реализации, а в среднесрочной и долгосрочной перспективе наблюдается тенденция к ослаблению.

- Было установлено, что среди структурных реформ, проведенных в Армении, наибольшую долю составляют фискальные структурные реформы. Поэтому характер, направление и величина реакции основных макроэкономических показателей Республики Армения на шок фискальных структурных реформ были оценены с использованием как секторальных (реальных, монетарных, фискальных), так и комбинированных моделей. Соответственно, это воздействие на макроэкономические показатели в долгосрочной перспективе уменьшается. Кроме того, оценки показывают, что, несмотря на значительное количество реформ, их влияние на макроэкономические показатели Республики Армения остается незначительным.

NARINE BAGRAT PETROSYAN

ASSESSMENT OF THE MACROECONOMIC CONSEQUENCES OF
STRUCTURAL REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field 08.00.02 - “Economy, the economics of its spheres and control”.

The defense of the dissertation will take place at 14:00 on 10th February, 2026 at the Meeting of Specialized Council 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia, acting at the Armenia State University of Economics. Address: 128 Nalbandyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

The dissertation is dedicated to assessing the macroeconomic consequences of structural reforms in the Republic of Armenia.

The **main goal** of the research is to identify the main problems by studying the nature of the structural reforms implemented in the Republic of Armenia and the main tools that ensure their macroeconomic impact, in particular, the main directions of structural reforms, the impact mechanisms, and to develop proposals for improving the tools and mechanisms of the structural reforms being implemented.

The **following tasks were proposed and solved** within the framework of the research:

- To study the evolution of existing theories and conceptual approaches to structural reforms, the differences formed around the terms "structural reform" and "structural change", to study the theoretical and methodological approaches to the intervention of structural reforms and macroeconomic indicators with the tools of the latter.
- To study and analyze the current state of structural reforms in the Republic of Armenia and several other countries and regions, based on internationally known indices.
- Within the framework of the research, assess the structural reform gap in the Republic of Armenia in the context of selecting an effective set of reforms and increasing their targeting.
- To quantify structural reforms and bring them into a measurable field, formulate, calculate, analyze, and evaluate the structural reform index in the Republic of Armenia, as well as the fiscal structural reform index, guided by the main directions of reforms.
- To assess the effectiveness of structural reforms, analyze and evaluate the short-term and long-term impacts of structural reforms by the main sectors of the economy (real, financial, fiscal, and labour market) in the context of the effectiveness of structural reforms, and identify their quantitative parameters and qualitative aspects.
- To research, assess and analyze the short-term and long-term impacts of fiscal and structural reforms on key macroeconomic variables and individual sectors of the economy (real, fiscal, monetary), to identify and clarify which combination of structural reform directions ensures a relatively high level of responsiveness of macroeconomic indicators.
- To study the problem of the “structural reform trap” and its manifestations from the perspective of the macroeconomic impacts of structural reforms and their effectiveness.

The **main scientific results and innovations** of the conducted research are as follows:

- A model for assessing the structural reform gap has been developed, which allows, through simulation scenarios, to identify those sectors of the economy or policy directions in which there is a need to implement reforms to ensure the target level of income.
- Structural reform and separate fiscal and budgetary structural reform indices have been developed for the Republic of Armenia, which allow analyzing and assessing the intensity of reforms based on their macroeconomic significance and degree of implementation.
- The nature, direction, magnitude and duration of the response of the main macroeconomic indicators of the Republic of Armenia to the shock of structural reforms were assessed using both sectoral (real, financial, fiscal, labor market) and combined models, according to which the impact of structural reforms on macroeconomic variables is greater in the first stage of their implementation, and in the medium and long term the impact exhibits a tendency to fade.
- It was substantiated that among the structural reforms implemented in Armenia, the share of fiscal structural reforms is the largest; therefore, the nature, direction, and magnitude of the response of the main macroeconomic indicators of the Republic of Armenia to the shock of fiscal structural reforms were assessed using both sectoral (real, monetary, fiscal) and combined models. Accordingly, this impact on macroeconomic indicators is decreasing in the long term. Moreover, assessments indicate that despite the significant number of reforms, their impact on the macroeconomic indicators of the Republic of Armenia remains small.

